

կով աւանդ ունինք, ասոնք, որ ներքեւը գըր-  
եալ են.—

«Մէկ հատ մեծ մեղեսիկ, որ 65 քարադ է :  
Մէկ հատ մեղեսիկ, որ 8 քարաթ է : Մէկ հատ  
մեղեսիկ, որ 14 ու կէս քարադ է : Մէկ հատ  
մեղեսիկ, որ 8 քարաթ է : Մէկ հատ մեղեսիկ,  
որ 10 քարաթ է : Մէկ հատ կապոյտ յակինթ՝  
105 քարաթ : Մէկ հատ դեղին յակինթ՝ 136  
քարաթ : Մէկ կանանչ, մէկ դեղին եւ մէկ  
ճերմակ 'անհլոն' արծաթ մատանի : Մէկ հատ  
մեղեսիկ արծաթ մատանի : Մէկ հատ մեղե-  
սիկ տախտակ (տափարակ քար), երկար 13 եւ  
կէս քարաթ : Մէկ հատ մեղեսիկ Բաղամի  
(կամ Բաղան նաւահանդիստ ի Սիւսմ՝ Յ. Ք.)  
22 ու կէս քարաթ : 26 քարաթ մանր յակինթ :  
Ութը հատ 'ոռլայի' : 16 ճերմակ «բուր-  
սադ» : Մէկ դեղին «բուրսադ» : Մէկ ճերմակ  
կլոր գինտ (գուշվարայ, Պարսիկ Կիււշվա-  
րա : Յ. Ք.) : Մէկ հատ կարմիր յակինթ :

«Շնորհիւ Աստուծոյ, տունը կը դառնուի  
երկու հատ մեղեսիկ հնդկական 103 քարաթ :  
7 հատ գմբուխթ միասին 94 քարաթ : 33 թու-  
րալի (Օսմանեան քուրաչով կնքեալ, Յ. Ք.) :  
6 հատ ոսկի, 6 հատ ոսկի, որոնց հինգը մէկ-  
նոց է եւ մէկը մինակ, բոլորը 6 ոսկի : Մէկ  
հատ լաւ արծաթ մատանի : Մէկ հատ Սէյլա-  
նի 'անհլոն' արծաթ մատանի :

Տէր Յովհաննեանց, որ մեզի կուտայ այս  
ցուցակազրութիւնը, կ'աւելցնէ .

«Արդ՝ եթէ հաշուեցի բովանդակ արժէք  
սոցին, ճոխութիւն նորա անցանէ քան զհար-  
իւր յիսուն հազար թուման» :21) :

Արդարեւ, խիստ պատկառելի գումար մը  
ժամանակուան սակով, այսինքն՝ 1700-ական  
թուականներուն :

Մեծարժէք եւ աշխարհահռչակ աղաման-  
դի մը հետաքրքրական պատմութեան կը հան-  
դիպինք հին «Բագմավէպ»երուն մէջ :

«Շատին ծանօթ ու եւրոպացոց մէջ շատ  
անուանի է Կատարինէ Բ. Կայսրուհիին դա-  
ւազանի ծայրի աղամանդը : Կ'ըսեն թէ աս ա-

ղամանդը ատենով Թահմազ զուլի Խանին է  
եղեր, որ Նազր շահ ալ կ'ըսուի : Պարսից  
թագաւորութեան շիրթած ատենները, Նա-  
տըր շահին հարստութիւնները ցրուէն ետ-  
քը, Շահնազ անունով Հայ վաճառականը  
պարսիկ զինուորէ մը կը դնէ աս աղամանդը  
եւ, 10 կամ 15 տարիէն ետքը, Աթաէրխան կը  
բերէ : Ռուսի վաճառականներուն մէջ գնող կը  
փնտոէ, չի գտնար : Թագաւորական դանձին  
ծախել կ'ուզէ՝ մտիկ ընող չըլլար : Ուստի  
միտք կը դնէ, որ Եւրոպայի ուրիշ տէրու-  
թիւններուն տանի : Բայց Եղիազարեան հա-  
յազգի իշխանին միջնորդութեամբ վերջապէս  
Օռլով կոմսը աս աղամանդը գնելու կ'ըլլայ  
թագաւորական դանձին համար, 400,000  
րուպլիով, որ հիմա 12,000,000 զուրուշ կ'ը-  
նէ : Շահնազը աս չափաւոր ստակին կը զի-  
ջանի, յանձն կ'առնէ, բայց կը խնդրէ, որ  
Կայսրուհին ալ իրեն մէկ շնորհք մը ընէ : Օռ-  
լով կ'առնէ աղամանդը, աղուոր տուփի մը մէջ  
դրած եւ Զատկին առջին օրը Կատարինէին  
կ'ընծայէ : Կայսրուհին ալ 400,000 րուպլին  
Շահնազին տալէն ետքը, ազնուականութեան  
աստիճան ալ կուտայ անոր : Աս աղամանդը  
ճանչցողները ինչուան հարիւր միլիոն Ֆը-  
րանքի կը արժեցնեն, որ 500 միլիոն զու-  
րուշ րսել է» :22)

Սակայն, Մեսրոպը Աէթեանց բոլորովին  
տարբեր պատմական մը կուտայ այս մեծար-  
ժէք աղամանդին : Նշանաւոր աղամանդը եր-  
բեմն մէկն էր աչքերէն համբաւեալ Հնդիկ  
կուռքին, որ ի Սրիւրանկում, Մայսօրի մէջ  
ամբացեալ կզգի մը : Զետեղուած է այժմ Ռու-  
սական Կայսերական դաւազանին ոսկիէ Ար-  
ծիւին անմիջապէս ներքեւը : 194 ու կէս քա-  
րաթ կը կշռէ, ներքին կողմը տափակ է, եւ  
կը կոշուի Օռլօֆ Իշխանին անուամբ, որ ա-  
ղամանդին գնողը եղած է : Միսդըր Էտուին  
Ու. Սդիւրդրը, իր «ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾ ԱԴԱ-  
ՄԱՆԴԵՐԸ» գործին մէջ կ'ըսէ.— «Անգ-  
լիայէն դէպի Ռուսիա իր ֆաւրուս վրայ էր,

21) Անդ :

22) Անդ՝ էջ 167 :